ԱՊԱԲԱՐՈՅԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԹԵՄԱՆ Գ. ԶՈՀՐԱՊԻ ՆՈՎԵԼՆԵՐՈՒՄ

ՇՈԼԻՆՅԱՆ Մ. Ռ.

Իր բազմաթիվ աշխատություններում («Մարդկային, չափազանց մարդկային», «Կամք առ իշխանություն», «Բարուց և չարից անդին», «Այսպես խոսեց Զրադաշտը», «ՀակաՔրիստոս»…) Ֆ. Նիցշեն վերագնահատում է ողջ արժեքորվածը և ջրի երես հանում բարոյական փտախտը, կեղծիքը, որով շպարված՝ բարեպաշտություն է խաղացվում: Նա փորձեց մարդուն արթնացնել բարոյական քարոզների դարավոր թմբիրից՝ պարտադրելով նրան սթափ նայել շուրջը՝ իմաստավորելու և կարևորե- լու մեկ անգամ տրված կյանքը: Նիցշեական գաղափարները ռումբի պայթյունով տարածվեցին և՛ Եվրոպայում, և՛ մեզանում: Կյանքի հավերժական վերադարձի երգը՝ նույն ինքը դիոնիսյան ցավ-հաճույք հակադրամիասնության հավերժական փոխանցումը՝ մահվան և սիրո, պատրանք-երազանքի հավերժական փոխկապակցությունը, իմաստավորվում էր բարոյական նոր գաղափարների անհրաժեշտությամբ, որը հնարավորություն էր ընձեռում ազատելու մարդուն և՛ կրոնի զսպաշապիկից, և՛ ամեն մի նախապաշարմունքից ու կանխակալությունից՝ դարձնելով նրան հոգում լայն հորիզոններ ունեցող, ազատ մտածողությամբ և առողջ կենսակերպով, բարձր բարոյականությամբ առաջնորդվող մարդու նոր որակ՝ գերմարդ: Ֆ. Նիցշեն մարդու ուշադրությունը բևեռեց այն հանգամանքի վրա, որ նախապաշարումներից ազատվելն այնքան էլ հեշտ գործ չէ, իսկ նոր բարոյականություն (բարու և չարի նոր ըմբռնում) ներմուծելը հոգևոր լայնամասշտաբ հեղափոխություն է, որն իրականացնելուն ժամանակ է հարկավոր:

Մարդու քարացած մտածելակաղապարները նորով փոխարինելու դրժվարությունը հաստատում է նաև արդի հոգեբանությունը: XIX–XX դդ. սահմանագծի բազմաթիվ մեծերի ստեղծագործություններում էական թեմա էր նիցշեական «ապաբարոյապաշտությունը» (իմմորալիզմ), որ նույնն է նոր բարոյական արժեքների, բարու և չարի նորովի ընկալման պահանջ, ինչը նիցշեական «առաքինիները» դիտել են իբրև անբարոյականության քարոզ: Այն բացառիկ անհատները, ովքեր երգում էին նորը, վեհը, բարձրը (Զարենց, Ինտրա, Շանթ…), իրենց երկրային կյանքում սարսափելի մենակ էին և տառապող. պատճառը լուսավորի, նորի պահանջն էր, որ քարոզում էին նրանք: Նրանք քարոզում էին հանել դիմակները: Այս դիտանկյունից լավագույն հեղինակներից է Գ. Զոհրապը, որի հոգեբանական նովելներն ասվածի փաստացի ապացույցն են: Բարոյականության խնդիրները նա քննում է «թռչնաբարձունքից»՝ «զվարթ գիտությամբ»[1] ծիծաղելով և՛ հասարակության, և՛ իր վրա. սա է մեր ապ-

[1] Տե՛ս **Ницше Ф.,** *Веселая наука (***Ницше Ф.,** *Утренняя заря. Переоценка всего ценного. Веселая наука, Минск, 2003).*

րած իրականությունը: Նրա նովելների հերոսները տառապում են, ձըգտում մարդկային երջանկության, սակայն ընդունված քարացած «բարոյականությունը» խանգարում է մարդուն լինել երջանիկ, քանի որ հասարակական կարծիքը ձևավորում են էմոցիոնալ ժանտախտակիրները: Ի՞նչ է հոգեբանական ժանտախտը:

Հոգեբան Վ. Ռայխը տարբերակում է բնավորության (ի դեպ, ըստ Վ. Ռայխի՝ բնավորությունը տարիների ընթացքում ձևավորվող՝ արտաքին աշխարհից պաշտպանվելու միջոց է) երեք տիպ՝ գենիտալ, նևրոտիկ և էմոցիոնալ ժանտախտով տառապող[2]: *Գենիտալ բնավորությունը* հստակ զանազանում է կարևորն անկարևորից, ամեն ինչ տեսնում է խորքային՝ ի տարբերություն ռացիոնալ մտածողության, որը միայն տեսանելի փաստերի հետ է հաշվի նստում: Այս բնավորությունն ունի խոր սիրելու կարողություն, սիրո մեջ նա չի ձգտում ո՛չ տիրելու, ո՛չ տրվելու (սադիզմ, մազոխիզմ)[3]: Նա ի վիճակի է երջանիկ լինելու և երջանկացնելու, նա փնտրում է փոխըմբռնում: Բնավորության այս տեսակը հասարակական հարաբերություններում ձգտում է առավել բարձր մակարդակի, մարդու ազատության և հոգու խաղաղության: Նա լայնախոհ է և կարեկից, խոր ցավ է ապրում մարդ արարածի համար, տառապում և որոնում փրկության ելք, ուղի: *Նևրոտիկ բնավորությունը* չափազանց մոտ է գենիտալին, սակայն խոր սիրո որոնման ճանապարհին նա չի հավատում երջանկությանը և հոգեպես շարունակ ընկճված է, արգելակված: Կարող է քարոզել բարձր գաղափարներ, սակայն երբ դրանք պետք է իրականություն դարձնել, նույնիսկ կատաղի դիմադրություն է ցուցաբերում, քանզի ենթագիտակցաբար վախենում է նորից, անորոշից: Իր կատաղի դիմադրությամբ նա ձուլվում է բնավորության երրորդ խմբին՝ *էմոցիոնալ ժանտախտով* տառապողների հսկայական բանակին: Սակայն, ի տարբերություն վերջիններիս, նևրոտիկն օժտված է համեմատաբար թույլ՝ «կենսակործանարար հասարակական ակտիվությամբ»: Գենիտալ մտածողության նման էմոցիոնալ ժանտախտով տառապողի մտածողությունը ևս լիովին համապատասխանում է իր գործողություններին՝ ի տարբերություն նևրոտիկի: Սակայն էմոցիոնալ ժանտախտով տառապողների եզրակացությունները պատրաստ են՝ մտածողության ընթացքը, կուռ դատողությունը դեռ վերջնակետի չհասցված. էմոցիոնալ ժանտախտակիրն ի վիճակի չէ հըստակ սեփական դատողության և վերլուծության, նա անմիջապես հանգում է իռացիոնալ որոշման՝ *նախապաշարմունքի, կանխակալ տեսակետի,* որը գալիս է «պապականից», ավանդականից, ինչով էլ նա փորձում է «մեկնաբանել» կամ հաստատել իր «տրամաբանության» եղանակը: Ժանտախտավոր մտածողությունը սուր վարակիչ է (այստեղից էլ՝ «էմոցիոնալ ժանտախտ»), այն «ունի ահռելի հասարակական հետևանքներ, լայն տարածում և գործնականում այն երևույթների հոմանիշն է, որ անվանվում են սովորույթ և ավանդույթ»[4]: Փաստորեն, ժանտախտավոր

---

[2] Տե՛ս **Ռայխ Վ.,** Էմոցիոնալ ժանտախտ (Գարուն, N 2, Ե., 2002, էջ 24–29) և *http://psycho.dtn.ru/txt/reich/reich004.htm*

[3] Նույն տեղում:

[4] Նույն տեղում, էջ 26:

մտածողությունը նախապաշարված, անհանդուրժող դիրքորոշում ունի, քանի որ «չի հանդուրժում այնպիսի ռացիոնալ մտածողություն, որը կարող է վերջ տալ իրեն»[5]: Այս ամենը՝ *մտածողության* մեջ: Վ. Ռայխը նկարագրում է նաև այս բնավորությունների դրսևորումը *գործունեության մեջ*: Գենիտալ մտածողությունն ու գործունեությունը ներդաշնակ են: Նևրոտիկը գործնական չէ, բայց և առաջընթացը չի կասեցնում, նա պասսիվ է: Իսկ էմոցիոնալ ժանտախտով վարակվածը խանգարում է հասարակական առաջընթացին, քանի որ նախապաշարված է, սնահավատ, և մըտածողության հիմքում քարացած սովորույթներն են: Այս տիպի մարդկանց խոսքն ու գործը երբեք միմյանց չեն բռնում: Նրանց գործունեության շարժառիթը՝ թե՛ գիտակցական, թե՛ ենթագիտակցական, կեղծիքն է, ինչ-որ բան ցուցադրելը ի շահ իրեն, բայց ոչ երբեք ճշմարտությունը: Այստեղից էլ նրանց խոսքի և գործի հակասությունը:«Հայտարարվածը երբեք չի համապատասխանում իրականին… Նրա համար այս կերպ գործելը այնքան բնական է, որքան սիրո կարիքը՝ գենիտալ բնավորության դեպքում»[6]: «Էմոցիոնալ ժանտախտը»,- ըստ Ռայխի,- *հասարակական հիվանդություն* է, քանի որ «ժանտախտով կառավարվող անհատները համախմբվում են հասարակական խմբերով: (Բնականաբար, Վ. Ռայխը՝ որպես ֆրեյդիզմի հետևորդ, հանգամանորեն բացատրում է նաև այս երեք բնավորությունների բուն առանցքը՝ այն հոգեկերտվածքը, որը ձևավորվում է ինչ-ինչ սեռական մղումներով: Մեզ համար էական է երևույթի հասարակական կողմը (*ծան.՝ Մ. Շ*)): Այսպիսի խմբերը դառնում են հասարակական կարծիքի կենտրոններ, որոնց բնորոշ է բնական սիրային կյանքը ծայրահեղ կերպով չհանդուրժելը[7]: Պետք է եզրակացնել, որ այս տիպի մարդկանց առաջին բնորոշ հատկանիշը մարդկայնորեն (կամ աստվածորեն) սիրելու կարողությունից զուրկ լինելն է: Մնացյալը բխում է այստեղից: Վ. Ռայխը, երկարատև հետազոտություններից ելնելով, նշում է այն ատելությունն ու թշնամանքը, որ ժանտախտակիրների հասարակությունը տածում է ազատ, սթափ մտածողության դեմ կամ հասարակական դրական բարեփոխումների հանդեպ[8]: Ժանտախտակիրների հասարակությունը ձևավորվում է Նիցշեի նշած միջինների «հոտային խմբերի» շնորհիվ: Դիտարկենք հոգեբանական այս երևույթի դրսևորումը Գ. Զոհրապի նովելներում: Թեման, որ շոշափում է Գ. Զոհրապն «Այրին» նովելում, ողբերգական է: Ողջ կյանքում Զարդարն սպասում է պանդըխտության մեջ գտնվող ամուսնուն: Զարդարը, ամուսնու հայրական օջախում ձեռք բերելով ծառայի կարգավիճակ, մեծ գերդաստանում աշխատում է որպես բանող գրաստ: Եթե սա բացառիկ ճակատագիր լիներ, դեռ ներելի է, բայց նա իր աչքի առաջ ունի բազմաթիվ նման կանանց՝ սկեսուրը, ամուսնու եղբայրների, հորեղբորորդիների կանայք… Զարդարի ողբերգությունը սրբագործված է օրենքով. ամուսնացել է եկեղեցու օրհնանքով, և այդպիսի «միությունը» «սուրբ» է: Գյուղի եկեղեցում Զարդարը

[5] Նույն տեղում:
[6] Նույն տեղում, էջ 27:
[7] Նույն տեղում, էջ 29:
[8] Նույն տեղում:

շարունակ աղոթում է, որն ավելի շատ հանդիմանության նման մի բան է, «պատասխանատու բռնել կ'ուզեր այս եկեղեցին իր խորանովը, մասունքներովը, բոլոր սուրբերովը, իր կործանած հույսերուն համար»[9]: Եզրակացությունը մեկն է. մարդը երջանիկ չէ: Վ. Ռայխը նշում է, որ իր կատարած հոգեբանական բացահայտումներն ունեն էական նշանակություն միայն մի տեսանկյունից. գիտակցաբար ըմբռնելով իրականությունը՝ օգնել մարդուն լինելու երջանիկ: Բնավորության տեսակների բացահայտմամբ հոգեբան Ռայխն իրական կյանքից զանազան օրինակներ է բերում, թե ժանտախտավոր մտածողությամբ տառապողներն ինչպես են իրենց շուրջ միայն կեղծիք, չարություն, ատելության թույն շաղ տալիս[10]: Դրա լավագույն ապացույցն են Զոհրապի հոգեբանական մի շարք նովելներ: Նիկողոս աղան («Լուսահոգին»), ավանդաբար «սրբությանը և օգտակարությանը» հավատացող մարդ լինելով, չէր ամուսնացել, քանի որ իր *պարտականությունն* էր նախ ամուսնացնել քույրերին, մի բան, որն այդպես էլ չէր հաջողվել: Եվ քանի որ հայրն էլ համաձայն չէր այն ընտրությանը, որ ժամանակին նա կատարել էր, Նիկողոս աղան *թաքուն ամուսնացած* էր իր սրտի ընտրյալի հետ, սակայն փաստը պահվում էր ծածուկ: Ողջ հասարակությունը գիտեր նրա երկու որդիների գոյության մասին, բայց մարդիկ *լռում էին, չիմանալու տալիս*, իսկ երեխաները կոչվում էին «բիձ»: Ինքը՝ Նիկողոս աղան, թաքուն կապված էր իր փաստացի կնոջը նաև մի՝ իր համար շատ կարևոր պատճառով. *նախապաշարմունք* ուներ, թե նրա՝ իր կյանքում հայտնվելով՝ գործերն ավելի հաջող են: Ահա իրեն շրջապատող հասարակությանը շատ արժանի մի անդամ: Ապրում են այսպես՝ նախապաշարված, կանխակալ կարծիքներով, «ավանդապաշտ»՝ մեռած հոր կամքին հլու: Չնայած դրան՝ առաջնորդվելով «չբռնված գողը գող չէ» կարգախոսով՝ թաքուն անում են ճիշտ հակառակը: Սա ստի, կեղծիքի աշխարհն է՝ «առաքինիների»՝ իրենց շուրջ հորինած իրականությունը, որում նրանք իրենց լավ են զգում: Նիկողոս աղան հոգու խորքում ուզում էր ի լուր հասարակության բարձրաձայն ընդունել իր որդիների գոյությունը, բայց նա համոզված էր, որ դա «բարոյականի դեմ» կդիտվի: Մահից հետո հասարակությունը նրան թաղեց իբրև մի պատվավոր մարդու, քանի որ, ժողովրդի կարծիքով, պատիվը ոչ թե կարգ ու կանոնից չշեղվելու, այլ «շեղումները չցուցնելու, պարտկելու» մեջ է: «Ընկերական (իմա՝ հասարակական (*ծան.* ՝Մ. Շ.)) նախապաշարյալ կարծիքը» բարձր է գնահատում անհատականությունից զուրկ «արածող նախրի» (Վրթ. Փափազյան) մի անդամին: Սակայն այս կերպարը՝ Նիկողոս աղան, այնքան հանցագործ չէ, որքան զոհ: Մեկ այլ զոհ է նրա չարացած պառաված օրիորդ քույրը, որը չի կամենում եղբոր ունեցվածքի ժառանգ ճանաչել նրա երկու որդիներին և բողոքում է այդ «բիձերի» դեմ: Իսկ Զոհրապը վար նայողի հոգեբանությամբ («զվարթ գիտությամբ») գրում է. «Բոլոր էսնաֆությունը իր ավանդական մոլոր վարդապետություններովը, կեղծիքով ու շահով շինված բարոյականովը, այս պառված աղ-

---

[9] **Զոհրապ Գ.**, Երկեր, Ե., 1989, էջ 63 (հաջորդ մեջբերումների էջերը կնշվեն տեղում):
[10] Տե՛ս **Ռայխ Վ.,** նույն տեղում:

ջիկով կներկայանար» (էջ 172): Այս նովելի անմիջական շարունակություն կարելի է դիտել «Ժամին բակը», որտեղ հայտնի ավազակին ժամի բակում իբրև բարերար թաղելու համար (քանի որ հարազատները վճարում են) անգամ թեմի առաջնորդ եպիսկոպոսը, որ շատ երկրային մտածողություն ուներ՝ «Ուսյալ եկեղեցական մըն էր, փորձառությունով լեցուն, համոզված, որ միմիայն ավետարանական ճշմարտություններով չի շարժիր աշխարհը» (էջ 106), փորձում է սոփեստությամբ հանգստացնել տեր Աբրահամին՝ պատճառաբանելով, թե հանգուցյալը հարուստների շրջանում մեծ ազդեցություն ուներ, որը կարող է հիմա ուղղվել եկեղեցու դեմ: Խոսքը «առաքինիների» խմբեր կազմելու և կեղծիքի հաղթանակն ապահովելու «շընորհիքի» մասին է: Մի շարք նովելներում («Մյուսը», «Սառա», «Հակոբիկ», «Փոստալ»…) մարդը չունի ներքին, հոգու ազատություն, այն ճնշված է արտաքին պայմանականություններով, նախապաշարմունքով, կեղծ բարոյականությամբ: «Սառա» նովելի հերոսուհին հիացնում է «պարտավորություն» գաղափարի իր մեկնաբանությամբ. արտաքուստ ամենքի աչքին երևում է հիվանդ ամուսնու նկատմամբ իր պարտականությունները կատարող շատ հոգածու կին: Իրականում նա չոր մաթեմատիկական հաշվարկով սպասում էր ամուսնու մոտալուտ մահվանը, որից հետո ինքը ազատ կլիներ. այդպես է սահմանել հասարակական բարոյականը: Ամուսնու մահից անմիջապես հետո, առանց որևէ հոգեկան ցավի ու տառապանքի, սառը դատողությամբ նա դրական պատասխան է տալիս իրեն սիրահետողին: Սառան ինքն էլ մի զոհ է՝ պայմանավորված հասարակական կարծիքով: Զոհրապի նովելներում նրանք, ովքեր կեղծիք սերմանող հասարակությունից չեն, բարձր են կանգնած դրանից, նրանք չեն ապրում. աստիճանաբար… մեռնում են: «Հակոբիկ» նովելում սոցիալական ծանր կացությունից ազատվելու համար Հակոբիկը չսիրելով ամուսնացել և տնփեսա է գնացել հասարակության մեջ «առաքինի» դիտվող մի ընտանիք՝ «առանց աղեկ մը գիտնալու թե ի՛նչ ընելու համար»: Հասարակության մեջ նրա դիրքը նորից սկսել էր վերականգնվել. արդեն բարևողներ կային, նույնիսկ՝ նախանձողներ էլ: Առաջարկեցին անգամ «թաղական ըլլալ»: Սակայն նա, լինելով բովանդակության և հոգու մարդ, խեղդվում էր ձևերի աշխարհում, ուր օրը երեք անգամ ճաշի էին նստում, կիրակի օրերը եկեղեցի գնում, «դրացի տուներուն մեջ պատահած եղելությունները» մանրամասն պատմում: Իր անհատականությունը կորցրած, հանձնված «ավանդապաշտ» հորձանքին՝ նա աստիճանաբար մեռնում էր: Եվ երբ մահացավ, թաղումն էլ կազմակերպվեց հավուր պատշաճի, թերթերն էլ, ըստ ընդունվածի, ծանուցեցին, թե նրա մահը «ի խոր սուգ համակեց տնեցիները», այնինչ իրականում «անոր մեռնելովը ոչ ոք ցավ մը զգաց»: Նրա այրին մի տարի սև հագավ՝ կրկին ըստ ընդունվածի. «ընդունված սովորությունները ամենքն ալ հարգվեցան ու պահպանվեցան»… Այս «ծիսակարգը» շատ-շատերի ապրելակերպն է և կյանքի իմաստը: Իսկ այդ տղան մեռավ հասարակական կեղծիքին չհարմարվելուց: Զոհրապն ամփոփում է. «Ցավը, որ զինքը տարավ, բորոտությունն էր՝ տարածված այնքան մեր մեջ և որուն իր առողջ նկարագիրը չտոկաց: Այդ հիվանդությունը կկոչվի՝ պայմանադրական կեղծիքը ընկերության («ընկերություն» ասելով՝ Զոհրապը նկատի ունի հասարակությունը (*ծան.* ՝ Մ. Շ.)» (էջ 154)): Պայմանականութ-

յունները, որոնք կաշկանդում են հոգու ազատությունը, ավանդապաշտությունը, որ վերանայվելու անհրաժեշտություն ունի և կեղծիքով շպարված փտած բարքեր է ամփոփում, սպանիչ են «առողջ նկարագիրների» համար:

Զոհրապի նորավեպերի աշխարհում արժեքները վերագնահատելու պահանջի թերևս լավագույն խտացումներն են «Փոստալը» և «Մագթաղինեն»: Մարդկային հոգեբանության, ապրումների և զգացումների խճանկարում՝ զոհրապյան հոգեբանական փոքր արձակում, յուրաքանչյուր հերոս որևէ անուն ունի, որով նրան դիմում են մյուս հերոսները, կամ որի մասին պատմելիս հեղինակն ինքը շեշտում է այդ անունը (օրինակ՝ «Այինկա»-ի հերոսները՝ Սահակ, Պերճուհի, Հակոբոս): Որոշ գործեր վերնագրված են այս կամ այն հերոսի անվամբ (օրինակ՝ «Զաբուղոն» (ի դեպ, *Զաբուղոն* բառը նշանակում է *բնակություն* (*տե՛ս* Աստվ., Ծնն., Լ. 20)): Զոհրապյան արձակում հետաքրքիր մի երևույթ էլ կա, որը պայմանավորված է նորավեպի գրական ժանրի առանձնահատկությամբ. երկը վերնագրվում է մի հերոսի անվամբ, որն *անմիջականորեն չի մասնակցում ծավալվող գործողություններին, սակայն ամեն բան անցնում-դառնում է նրա շուրջ* ՝ինքնաբերաբար այդ հերոսին դարձնելով հանգույց, որտեղից սկիզբ է առնում սրընթաց զարգացող գործողությունը: Դիպուկ օրինակ է «Ճեյրանը»: Հերոսուհին գրեթե չի երևում, այնինչ գործողությունը, դեպքերը պայմանավորված են նրա գոյությամբ: «Ճեյրան» վերնագրում հեղինակը խտացնում է ասելիքը: Այս տեսանկյունից բավական հետաքրքիր է «Մագթաղինեն»: Վերնագիրը հուշում է, որ Մագթաղինեն հերոսուհու անունն է, սակայն, բացի վերնագրից, ոչ մի անգամ չի նշվում հերոսուհու անունը: Ինչո՞ւ հատկապես Մագթաղինե: Նյութը, որին Զոհրապն անդրադարձել է այս նովելում, մարդկության հավերժական ուղեկիցներից է. սոցիալական ծանր կացության հետևանքով կյանքի հատակն ընկած կնոջ կերպարը խորթ չէ համաշխարհային գրականությանը: Նման կերպարի մի տարբերակ է Զոհրապի Մագթաղինեն: «Անհուն խնամքով ու գորովով մը իր պզտիկ քրոջ ու եղբորը վրա կշարունակեր հսկել հեռվեն, ծախելով շարունակ իր մարմնին ճոխություններն, առանց զոհողություն մը ըրած ըլլալու գաղափարը մտքեն մազի չափ անցընելու» (էջ 51),- գրում է Զոհրապը: Դեռահաս աղջիկը կյանքի հատակն էր իջել ինքնակամ՝ մերձավորներին փրկելու ակնկալությամբ: Հերոսուհին անուղղելի անառակ չէ, այլ կյանքի բազմաթիվ զոհերից մեկը: Կյանքի ճահճում այդպես խոր թաղված «ան-բարոյականները» ավելի բարձր են «բարձր» հասարակության «առաքինիներից»՝ Սուրբիկ հանրմներից («Փոստալ»), քանզի միայն առաջին հայացքից է նրանց արարքը անառակություն, իրականում այդ կանայք ինքնակամ զոհաբերվող անհատներ են, որոնք, հանուն մերձավորի, ստորադասում են սեփական անձը: Զոհրապն անթաքույց համակրանքով է խոսում հերոսուհու մասին: Հերոսուհին, որ երբեք հաղորդության չէր գնում, պատճառաբանում էր, թե չի կարող կեղծ զղջալ, քանի որ շարունակելու է նույն կյանքը: Նա «քահանայե մը ավելի խստապահանջ էր ինքզինքին համար» (էջ 50) և այն-քան ազնիվ ու մաքուր, որ իրեն հաղորդության պատրաստ է զգում միայն մոտալուտ մահվան սարսուռն ապրելիս, երբ համոզվում է, որ այլևս

մեղք չի գործելու և հենց այդ ժամանակ էլ խնդրում է քահանա կանչել: Այսինքն՝ մեղանչած այս կինն ուզում է ապաշխարել ու այն էլ՝ անկեղծ և ի սրտե: Սովորաբար այս հերոսուհին թյուրիմացաբար անվանվում է *Մագթաղինե*, սակայն ուշադիր ընթերցումն այլ բան է ցույց տալիս: Այս անունը հաճախ է հանդիպում արվեստում: Հիշենք Վեյդենի «Մարիամ Մագթաղենացի», Ռուբենսի «Խնջույք փարիսեցի Սիմոնի տանը» կտավները, Բ. Պաստերնակի «Մագթաղինե» բանաստեղծությունը և այլն… Այս բոլորի հիմքում ընկած են Ավետարանները, որոնցից էլ իրենց նյութը քաղել են զանազան արվեստագետներ:

Համաձայն Ղուկասի Ավետարանի, երբ Քրիստոսը հյուրընկալված էր փարիսեցի Սիմոնի տանը, նրա մոտ է գալիս մեղավոր մի կին, որը թանկարժեք յուղով, նաև իր արցունքներով օծում է Տիրոջ գլուխը, ոտքերը և սրբում սեփական մազերով: Եվ փարիսեցին զարմանում է, թե Հիսուսն ինչպես է հանդուրժում անառակի ներկայությունը, եթե իրոք նա Աստծու որդին է: Կռահելով դիմացինի միտքը՝ Քրիստոսը պատմում է փոխատուի և երկու պարտապանների առակը. «Հիսուս պատասխանեց նրան և ասաց. - *Սիմո՛ն, քեզ ասելու բան ունեմ:*

Եվ սա ասաց. - *Ասա՛, Վարդապետ:*

Եվ Հիսուս ասաց. «Մի փոխատու երկու պարտապաններ ուներ. մեկը 500 դահեկան պարտք ուներ, իսկ մյուսը՝ 50: Եվ քանի որ նրանք հատուցելու ոչինչ չունեին, երկուսին էլ պարտքը շնորհեց. հիմա ասա՛. ո՞վ ավելի շատ կսիրի նրան»: Սիմոնն ասաց. «Ինձ այնպես է թվում, թե նա՛, ում ավելի շատը շնորհեց»: Եվ Հիսուսն ասաց նրան. «Ուղի՛ղ դատեցիր»: Եվ դառնալով կնոջ կողմը՝ Սիմոնին ասաց. «Տեսնու՞մ ես այս կնոջը, մտա քո տունը, ոտքերիս համար ջուր չտվիր, իսկ սա իր արտասուքներով թրջեց իմ ոտքերը և իր մազերով սրբեց: Դու ինձ մի համբույր էլ չտվիր, սակայն սա ահա տուն մտնելուց ի վեր չի դադարում ոտքերս համբուրելուց: Դու յուղով իմ գլուխը չօծեցիր, սա անուշ յուղով ոտքերս օծեց: Դրա համար քեզ ասում եմ. իր անհամար մեղքերը կներվեն սրան, որովհետև ուժգին սիրեց, քանզի ում շատ է ներվում, շատ է սիրում, և ում սակավ՝ սակավ (Ղուկ., Է, 41-48, 50)»: Նույն սյուժեն տեղ է գտել նաև մյուս Ավետարաններում, սակայն Մատթեոսի և Մարկոսի շարադրանքներում «մեղավոր կնոջ» փոխարեն պարզապես նշված է «մի կին» (Մատթ., 26, 6-7, Մարկ., 14, 3), իսկ Հովհաննու Ավետարանում շեշտվում է, որ այդ կինը Ղազարոսի և Մարթայի քույր Մարիամն է (Հովհ., 12, 1-3): Ի՞նչ կապ ունի այս ամենը Մագթաղինե անվան հետ: Բանն այն է, որ բյուզանդական կրոնական գրականության մեջ ավետարանական վերոհիշյալ սյուժեում, որպես Հիսուսի ոտքերն օծող մեկը, հանդես է գալիս Մարիամ Մագթաղենացին, նույն ինքը՝ Մագթաղինեն, որը հետագայում ներկա է գտնվում Քրիստոսի խաչելությանը և հարությանը: «…Արևմտյան ավանդույթում Մարիամ Մագթաղենացին նույնականացվում է Բեթանիայում Քրիստոսին հյուրընկալող Մարթայի և Քառօրյա[11] Ղազարոսի քրոջ՝ Մարիամի, ինչպես նաև ոմն Սիմոնի տանը Քրիստոսի

[11] *Քառօրյա* բառը հուշում է այն մասին, որ Ղազարոսը չորս օրվա մեռած և թաղված էր, երբ Հիսուսը հարություն տվեց նրան (*ծան.՝ Մ. Ռ.*):

գլուխը մեռոնով օծող, նրա ոտքերն իր արցունքներով լվացող և իր մազերով սրբող մեղավոր կնոջ հետ… Այսպես, Մարիամ Մագթաղենացին դառնում է ապաշխարած անառակ կնոջ կերպար»[12]: Հետևաբար՝ աստվածաշնչյան անանուն մեղավոր կինը նույն ինքը՝ Մարիամ Մագթաղենացին կամ Մագթաղինեն է: Իսկ վերոհիշյալից հետևում է, որ Մագթաղինեն մեղանչած, բայց և ապաշխարած մոլորյալի խորհրդանիշ է: Բազմաթիվ արվեստագետների ներշնչած այս կերպարը Զոհրապի նորավեպում ևս մի հետաքրքիր կերպավորում է ստացել: Վերնագիրը թափանցիկ ակնարկ է հերոսուհու էության մասին, ոչ թե նրա անունն է:

Մի ապացույց ևս: Ռ. Սևակը «Պոռնիկը» բանաստեղծությունում, որը նվիրված է Գ. Զոհրապին[13], նման մի կնոջն անվանում է՝ «Քու՛յր», որը ոչ թե անուղղելի անառակ է, այլ խեղճ մի արարած, որն սպասում է «Այն բարեհա՛ճ Արուին, որ հաց ուներ …» իրեն տալու: Իսկ ինչու՞ է Ռ. Սևակը բանաստեղծության վերնագրի տակ նշել՝ Գ. Զոհրապին: Ակնարկը միանգամայն պարզ է: Ռ. Սևակը նկատի ունի Զոհրապի «Մագթաղինե» նորավեպը և ընդգծում է իր ու Զոհրապի աշխարհայացքի ընդհանրությունը այս հարցում: Այս բանաստեղծությունը ևս հուշում է, որ Զոհրապի հերոսուհին «Քու՛յր է» (Ռ. Սևակ) կամ «աղվոր կին» (Գ. Զոհրապ), իսկ խորհրդանիշի փոխարկված՝ Մագթաղինե: «Մագթաղինե» նորավեպի հերոսի անունը հայտնի չէ. նա դարերի խորքից եկող և ապագա դարերի խորքը գնացող Մագթաղինե է՝ կյանքի զոհերից, ում կեղծ բարեպաշտությամբ դատապարտում են «առաքինիները»:

Այժմ անդրադառնանք իր հերոսուհու նկատմամբ Զոհրապի անթաքույց համակրանքին: Նովելը եզրափակող հատվածում նա նշում է, թե ինչքան էլ բարձրաստիճան եկեղեցականը փորձի «հրապուրված աղջկան և պոռնիկին զանազանությունը» ներկայացնել, «իր փաստերը՝ բարբարոս և վավերական, չհամոզեցին զիս»: Սակայն եկեղեցին «պոռնիկին» հաղորդություն չէր կարող տալ: Ինչ զլանում է տալ եկեղեցին, տալիս է մահը. «Հետո մահը վրա հասավ, դանդաղ, հանդիսավոր ու մռայլ բանը, վերարկուն՝ ուր նախախնամությունը հոգածու ձեռքով փաթթեց բոլորեց այս աղջիկը, որուն՝ մարդոց ճղճիմ հաշիվները ու սխալ դատաստանը ամեն սփոփանք զլացեր էին աստուծո անունով» (էջ 52): Իրականում այս կինը զոհ է. նա թերևս քրիստոնեական «պարտականություն» հրահանգն է կատարել՝ քրոջը, եղբորը, տատին պահելու համար, և ինքնազոհաբերվել է հանուն մերձավորի: Սակայն հասարակությունը տեսնում է այն, ինչ սառցաբուրգի միայն երևացող կտորն է. այդ կինն աշխատում է վատահամբավ տանը: Սրբի պես մաքուր ու անմեղ հոգով աղջիկն անգամ չի համարձակվում եկեղեցու «սուրբ» պատերից ներս մտնել՝ իրեն մեղավոր զգալու պատճառով: Սրա նմաններին Քրիստոսը ներել է, իսկ մարդն իրեն Քրիստոսից բարձր է դասում. եկեղեցին իր նախապաշարումներով և «քրիստոնեական բարոյականությամբ», ելնելով սխալ դա

[12] *Мифы народов мира, т. 2, М., 1992, с. 117.*

[13] 1955 թ. երևանյան ժողովածուի մեջ ներկայացված է առանց վերնագրի, և հանված է »Գ. Զոհրապին« նվիրաբերումը:

տաստանից և մարդկային ճղճիմ հաշիվներից, ամեն սփոփանք մերժել էր այս աղջկան՝ Աստծո անունով: Սա է Զոհրապի եզրակացությունը:

Ֆ. Նիցշեն, վերագնահատելով քրիստոնեական բարոյականությունը՝ բարու և չարի ըմբռնումը, խոսում էր իշխանության և եկեղեցու կողմից դարերի ընթացքում կատարված այն աղավաղումների մասին, որոնք կատարվեցին Քրիստոսի բուն պատգամներն աղավաղելով՝ դրանք իրենց շահերին ծառայեցնելու համար: Եթե «Ժամին բակը» նովելում բարեպաշտի անուն է ստանում ավազակը՝ եկեղեցու թույլտվությամբ, այստեղ («Մագթաղինե») նույն եկեղեցին աղջկա անկեղծ զղջումը չի ընդունում, թողություն չի տալիս: Զոհրապը «զվարթ գիտության» խորքում թաքնված լացով ու ցավով մատնացույց է անում «բարոյական» այնպիսի հարաբերություններ, որոնք վաղուց վերանայվելու անհրաժեշտությունն ունեն: «Փոստալ» նովելն ասես «Մագթաղինեի» սերտ շարունակությունն է: «Սուրբիկ» անունը շատ խոսուն է: «Սրբի» կեղծ շպարով պատված դեմքի հետևում զարհուրելի հոգի է թաքնված: Նա իր ամուսնու հետ հիվանդանոցի «բարերար» է: «Սրբասեր և աստվածավախի» համբավ է ձեռք բերել, կին, որի գովեստը եկեղեցու բեմից հաճախ էր անում քարոզիչ սրբազանը: «Մեղր ու կաթ կվազեր բերնեն», սակայն սրա որդին էլ նման է, բնականաբար, և՛ մորը, և՛ հորը. «…հորը պես իր բոլոր իղձերը թաքուն պահելու սորված ու, ատոր համար, ա՛լ ավելի ինքզինքը զսպելու անկարող…» (էջ 20). ահա կեղծիքի, ստի մեջ ապրող «առաքինիների»՝ էմոցիոնալ ժանտախտակիրների վառ համաստեղություն, որն ամեն բան անում է *երևալու, թվալու*, բայց ոչ երբեք իրականում *լինելու* համար: Այսպիսիների նկատմամբ շատ կոշտ է Զոհրապի դիրքորոշումը: Երբ «Սուրբիկ» կոչվածը «փոստալին» վռնդելուց առաջ ծնվելիք երեխայի հետ կապված տրվելիք գումարի չափի շուրջ միջնորդի հետ առևտուր էր անում, իր բարոյականության չափանիշներից ելնելով՝ կեցվածք է ընդունում, թե ավելի լավ է այդ փողը՝ որպես բարեգործություն, նվիրի հիվանդանոցին: Իսկ Զոհրապը գրում է. «… կ'ըսեր Սուրբիկ հանըմ, կրկնելով այն խոսքը, զոր իրենց պարտքը վճարել չուզողները, հայտնի ավազակ մը չհամարվելու համար, սովորաբար կգործածեն մեր մեջ» (էջ 24): Մի՞թե երևույթն այսօր չկա մեզանում… Հավերժական վերադարձ… Այդ «սուրբիկների» մասին է հոգեբան Վ. Ռայխը նշում, թե բնավորություններ են, որ ապրում են խմբավորումներով, որ կեղծ, իրականում իրենց շահերը քողարկող հասարակական կարծիք են տարածում, որ հանդես են գալիս բարձր արժեքների՝ բարոյականության, մշակույթի դիմակով: Սրանց բնորոշ է կատաղի դիմադրությունը լուսավորի, նորի, բարձրի նկատմամբ, քանզի վարժված ներքին, հոգևոր ճահճի աղտեղությանը՝ շնչահեղձ են լինում «բարձր լեռների» հոգեբանության օդի թարմությունից, քանզի ժանտախտավորը «չի հանդուրժում այնպիսի ռացիոնալ մտածողություն, որը կարող է վերջ տալ իրեն»[14]: Զոհրապի նովելն ավարտվում է էմոցիոնալ ժանտախտակիրների հասարակության նկարագրությամբ: Գիտակցելով ճշմարտությունը՝ «սուրբիկներից» կազմված հասարակությունը *լռում է,* բարձրաձայն ասվում է միայն *կեղծիքը.*

[14] **Ռայխ Վ.,** նույն տեղում:

սպասուհին ինչ-որ սպասավորի զոհ է, բայց ոչ երբեք՝ Սուրբիկի որդու: Գ. Զոհրապի հոգեբանական արձակում մերկապարանոց ցուցադրվում է հասարակական հարաբերությունների կեղծիքը, վերարժևորվում են արժեքները, գրողը պահանջում է ստից, ցուցադրականից զերծ մարդկային հարաբերություններ, առաջ քաշում մարդու Մարդացման պահանջ:

ИММОРАЛИЗМ В НОВЕЛЛАХ Г. ЗОГРАБА

ШОЛИНЯН М. Р.

Резюме

Переоценка ценностей, заложенная в основе мировоззрения Ф. Ницше, нашла отражение не только в европейской, но и в армянской литературе, положив начало новому “течению” – имморализму. Яркой иллюстрацией сказанного является психологическая проза Г. Зограба, бичующая лживость общественных отношений. Писатель ратует за “очеловечивание” человека и искренность межличностных отношений.